ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2017թ. թիվ 494-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՒ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 32-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հուլիսի 29-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշմամբ ընդունված ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության կազմման ու իրականացման հայեցակարգի ու մեթոդական ուղեցույցի պահանջներին համապատասխան մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակայնության ու հասարակական կազմակերպությունների կողմից կատարված առաջարկությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հուլիսի 6-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության» հիմնարար դրույթների հետևողական իրականացումն ապահովելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության տարեկան աշխատանքային պլանների և մոնիտորինգի մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Ձևավորել ոլորտային աշխատանքային խմբեր (ՈԱԽ) և նշանակել նախագահներ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 27-ի «Լոռու մարզային զարգացման ծրագրի մարզային հանձնաժողովի և ոլորտային աշխատանքային խմբերի մասին» թիվ 32-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 8
ք.Վանաձոր